

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների»

«Լավ կառավարման մոնիթորինգ և գնահատում»

Զեկույց

Երևան 2016

Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել իրականացնել Վիշեգրադ միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ձևավորել ապացույցների վրա հիմնված շահերի պաշտպանություն հանուն իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից:

Զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են **«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին** և հնարավոր է, որ չհամընկնեն Վիշեգրադ միջազգային հիմնադրամի տեսակետների հետ:

Ծրագիրն իրականացվել է Վիշիգրադ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ՝ նպատակ ունենալով Արևելյան գործընկերության անդամ երկրների, մասնավորապես՝ Հայաստանի և Վրաստանի հետ կիսել V4 երկրների (Լեհաստան, Հունգարիա, Սլովակիա, Չեխիա) փորձն իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման խթանման գործում:

Ծրագիրն իրականացվել է հետևյալ կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

1. Վրաստան- Georgian Foundation for Strategic and international Studies-www.gfsis.org
2. Հունգարիա- International Centre for Democratic Transition-www.icdt.hu
3. Չեխիա- Civil Society Development Foundation <http://www.nros.cz/en/>
4. Սլովակիա- PDCS, Partners for Democratic Change Slovakia-www.pdcs.sk
5. Լեհաստան- Court Watch Poland Foundation-www.courtwatch.pl



Ծրագրի կայքէջ:
<http://v4.prwb.am>

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
Արդյունավետ կառավարումը Հայաստանում անկախությունից ի վեր	7
Ցուցիչ 1: Չայն և հաշվետվողականություն.....	8
Իրավիճակը Հայաստանում	9
ՑՈՒՑԻՉ 2 : ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ և ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	14
Զինված համակարտություն 2014.....	15
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ	16
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ.....	19
Ցուցիչ 3: Կարգադրիչ որակ	22
Օրենսդրական կարգավորումների ազգային կենտրոն	25
Ցուցիչ 4: ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ	28
ՑՈՒՑԻՉ 5: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ.....	29
Երրորդ և ընթացիկ 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարություն թվականների համար	37
Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները	38
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	40
Տեղեկատվության աղբյուրներ	43

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կառավարումը բնութագրվում է որպես հասարակության կողմից կանոնների սահմանում և դրանց կառավարման միջոց, որը հանգեցնում է քաղաքականության մշակման և իրականացման (UNDESA, 2007):

Կառավարումը սահմանում է արժեքների, քաղաքականության, ինչպես նաև հաստատությունների մի շարք, որոնցով հասարակությունն առնչվում է իր տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացման հետ:

Եվրոպայի Միությունն արդյունավետ կառավարումը սահմանել է որպես կառավարման և քաղաքականությունում ուժեղ հաշվետվողականության և թափանցիկության զարգացած համակարգ (Եվրոպայի Միություն, 2003):

Համաձայն ՄԱԿ-ի՝ կառավարումը կարող է համարվել արդյունավետ, երբ այն տեղաբաշխում և կառավարում է իր ռեսուրսները հավաքական խնդիրներին արձագանքելու համար, այլ կերպ ասած, երբ պետությունը իր քաղաքացիներին արդյունավետորեն և հավասարաչափորեն տրամադրում է հանրային օգտագործման անհրաժեշտ հանրային ապրանքներ, ծառայություններ:

Լավ կառավարումը/արդյունավետ կառավարումը բնութագրվում է նաև որպես սոցիալական արդարության, ազգային բարգավաճման, ինչպես նաև խաղաղության և զարգացման հիմնական օժանդակողը¹:

Չնայած պետությունների սոցիալ-քաղաքական զարգացման գործում արդյունավետ կառավարման նշանակությանը և կարևորությանը՝ գոյություն

¹ Roberts, Brad, *The New democracies: global change and U.S. policy*, The MIT Press 1990

ունեն պետություններ, որոնք դեռևս չեն որդեգրել արդյունավետ կառավարման մոդելը, ավելին՝ վերջինիս ներդրման ուղղությամբ կատարվելիք բարեփոխումները և մոտեցումներ շոշափելի արդյունքներ չեն տվել:

Նման իրավիճակը կարող է բնութագրվել որպես քաղաքական առաջնորդների և պետությունների որոշումներ կայացնողների կողմից պաշտոնական դիրքի/իշխանություն չարաշահում:

Հետևաբար, կառավարողները պաշտպանում են միայն այն միջավայրը, որտեղ նրանք անձեռնիսելի են օրենքով: Եվ նմանատիպ երկրներում անձիք են, որ ղեկավարում/կառավարում են՝ օրենքի գերակայության փոխարեն:

Արդյունավետ կառավարումը Հայաստանում անկախությունից ի վեր

1991 թվականից ի վեր Հայաստանը պարբերաբար քայլեր է ձեռնարկել ավտորիտար քաղաքականությունից ժողովրդավարության անցնելու ուղղությամբ: Այդ քայլերը ուղեկցվել են սոցիալ-տնտեսական, քաղաքական, ինչպես նաև մշակութային մարտահրավերներով և բարեփոխումներով: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ներգրավվել է մի շարք բարեփոխումների իրականացման ծրագրերում, որոնք ուղղված են եղել ապահովելու մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, բարելավել դատական համակարգը և ապահովել վերջինիս անկախությունը, ինչպես նաև պայքարել կոռուպցիայի դեմ և ազատականացնել երկրի տնտեսությունը:

Սկսած 2003 թվականից Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հաստատեց Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը, որին հաջորդեց երկրորդ, ինչպես նաև արդեն երրորդ՝ ընթացքի մեջ գտնվող հակակոռուպցիոն ռազմավարությունները: Չնայած այս ջանքերին՝ այս բոլոր քայլերը չեն հանգեցնում պրոգրեսիվ փոփոխությունների:

Ավելին, կոռուպցիոն ռիսկերը, բարդ բյուրոկրատիան, ինչպես նաև օրենսդրության ոչ լիակատար իրականացումը նվազեցնում են պետական հաստատությունների արդյունավետության մակարդակը:

Դիտարկումներում ավելի հստակ լինելու համար, սույն հաշվառվածությունում կներկայացվի Հայաստանում արդյունավետ կառավարման ընդհանուր պատկերը և իրավիճակը՝ համախառն կառավարման ցուցանիշների հիման վրա, որոնք տվյալների տարբեր աղբյուրների վրա հիմնված համակցված միջոցներ են:

Ցուցիչ 1: Չայն և հաշվետվողականություն

Այս ցուցիչի ներքո ձայնի և հաշվետվողականության սկզբունքները ուսումնասիրվում են քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության հնարավորությունները և դրանց գործնական իրականացման միջոցները:

Սրա առնչությամբ պետք է ստեղծել օրենքներ, գործակալություններ/գործոններ և գործընթացը խթանող միջոցներ, որոնք կապահովեն քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում: Իրավական դաշտից բացի, պետք է լինեն նաև հստակ ընթացակարգեր և պատշաճ ուղենիշներ, որոնք կապահովեն քաղաքացիական հասարակության և կառավարության միջև խորհրդատվական գործընթացները՝ ուղղված նոր քաղաքականության և օրենքների մշակմանը: Ավելին, թափանցիկության մշակույթ պետք է ձևավորել, որը քաղաքացիներին հնարավորություն կընձեռի արդյունավետորեն մասնակցել երկրի քաղաքական կյանքին:

Իրավիճակը Հայաստանում

Նոր օրենքների և օրենսդրական միջոցառումների առնչությամբ քաղաքացիական հասարակության հետ պարտադիր և ոչ պարտադիր հանրային քննարկման պրակտիայի ձևավորման պահանջը, բյուջեի պլանավորման գործընթացները, տեղեկատվության ազատության մասին օրենքի առկայությունը և վերջինիս իրացումը, հանրային տեղեկատվության մատչելիությունը/հասանելիությունը պետական մարմինների կայքէջերի, պորտալների միջոցով, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մասնակցությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացներում գնահատելու այլ կարևոր տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

- Առաջարկված օրենսդրության փոփոխությունների փորձագիտական գնահատումն իրականացվում է պետական մարմինների կողմից (որոնք նաև իրականացնում կամ հանձնարարում/են նորմատիվ ակտի ազդեցության պարտադիր գնահատումը), օրենքի նախագծերի ներկայացնելուց առաջ կանաչ թղթերի (կառավարության առաջարկությունների նախնական զեկույց, որը հրապարակվում է դրա շուրջ քննարկումներ կազմակերպելու նպատակով) հրապարակելու պարտադիր պրակտիկա չկա (չնայած «կանաչ թղթերը» հրապարակվում են նաև էդ հոբ հիմունքով, այսինքն՝ հանրությունը տեղեկացվում է և հանրային քննարկումները մեկնարկում են՝ օրենքի նախագծերի ավարտից հետո:
- Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջի՝ կառավարությունը կամ օրենսդիրը պետք է հանրային քննարկում ծավալի քաղաքացիական հասարակության, համապատասխան փորձագիտական մարմինների կամ այլ շահառուների հետ՝ նպատակ ունենալով գնահատել հանրային կարծիքը, փնտրել այլընտրանքային առաջարկություններ, ինչպես նաև գնահատել առաջարկվող նախաձեռնության ռիսկերը և ֆինանսական ծախսերը:

- Կառավարությանն առնըթն էր Հանրային խորհուրդը՝ կառավարության և քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության և օրենսդրության մշակման առնչությամբ հանրային քննարկումները կոորդինացնող հիմնական մարմինն է: Տեղական մակարդակով նմանատիպ մարմին գոյություն չունի: Այնուամենայնիվ, օրենքի նախագծի չիրապարակման համար բողոքարկման մեխանիզմներ չկան: Տեսականորեն, նմանատիպ բացթողումները Կառավարության մասով կարող են վիճարկվել քաղաքացիների կողմից՝ Վարչական դատավարության օրենսգրքով, սակայն այդպիսի դեպքեր չեն գրանցվել:
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պահանջում է իշխանություններին տեղի բնակիչներին տեղեկացնել ավագանու արտահերթ նիստի մասին՝ նիստից 7 օր առաջ և տեղի բնակիչները կարող են մասնակցել ավագանու նիստին: Սակայն, օրենքը չի պարտավորեցնում իշխանություններին տեղի բնակիչներից ստանալ մասնագիտական կարծիք կամ մեկնաբանություններ:
- «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումները»² կիրառվում են բոլոր պետական, տեղական ինքնակառավարման և տարածքային մարմինների նկատմամբ: Ուղեցույցները հնարավորություն են տալիս ստեղծել աշխատանքային խմբեր և կոմիտեներ՝ օրինագծերի մշակմանը մասնակցող բոլոր շահագրգիռ կողմերին օրենքի նախագիծը առաջին անգամ հրապարակվելուց հետո: Օրենքի նախագծերը մշակելիս խորհրդարանական հանձնաժողովները երբեմն խորհրդակցում են քաղաքացիական հասարակության և անկախ փորձագետների հետ:
- Օրենսդրության իրականացման մոնիթորինգի և գնահատման պահանջ չկա՝ ներքին ֆինանսական աուդիտի պահանջներից դուրս:

²<http://www.parliament.am/library/books/iravakan%20akteri%20naxagceri%20mshakman%20metodakan%20cucumner.pdf>

- Իրավական կարգավորումները պահանջում են օրենքի նախագծերի և քաղաքականության վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպումը բոլոր շահագրգիռ անձանց և կազմակերպությունների հետ: Մինչդեռ՝ իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդակալի ցուցումները ներառում են ընդհանուր ուղենիշներ հանրային քննարկման մասնակիցների ընտրության առնչությամբ. այն չի հստակեցնում քաղաքացիական հասարակության դերը:
- Քանի որ օրենքի նախագծերը միշտ չէ որ հրապարակվում են, այդ առնչությամբ հանրային լսումներ, կլոր-սեղան քննարկումներ տեղի չեն ունենում: Սովորաբար, հանրային լսումները նախապես չեն հրապարակվում, միայն տվյալ օրենքի կամ օրենսդրության դաշտում ակտիվ որոշ հասարակական կազմակերպություններն են հրավիրվում հանրային քննարկման և վերջինիս մասին հայտարարվում է, երբ արդեն տեղի է ունեցել՝ դրանից բխող առաջարկությունների և արդյունքների նախնական քննարկում: Հանրային քննարկումներ տեղական մակարդակով տեղի չեն ունենում:
- Գոյություն ունի Ներքին առևիտի մասին օրենք, որը ներառում է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը: Այնուամենայնիվ, սա չի կարող համարվել մոնիթորինգ, քանի որ այն ներառում է հիմնականում գործունեության ֆինանսական ասպեկտները:
- Օրենքների իրացման խնդիրներն բարձրացնելու միակ ճանապարհը դատարանների վերանայումն է: Հանրային քաղաքականության կամ ռազմավարությունների մոնիթորինգը կամ գնահատումը սովորաբար կցվում են միևնույն քաղաքականությանը, բայց այն շատ տարածված չէ: Համաձայն ՀՀ Սահմանադրության Հոդված 156-ի՝ Կառավարությունը հաշվետու է Ազգային ժողովին՝ Ազգային ժողովի կողմից ընդունված իր ծրագրերի համար: Յուրաքանչյուր տարի Կառավարությունը զեկույց է ներկայացնում Ազգային ժողով իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին:

- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2011 թվականին: Այն կարգավորում է քաղաքացիական ծառայության պայմաններին և պահանջներին առնչվող բոլոր հարցերը, ինչպես նաև սահմանում է քաղաքացիական ծառայողների իրավասությունները:
- Գոյություն ունի նաև տեղեկատվության ազատության մասին օրենքը, որի գործողությունը, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով, տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների (Հոդված 3), ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա:
- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկատվության տրամադրումը մինչև 10 էջ-ի սահմանում կատարվում է անվճար: Երբ հարցվող տեղեկատվությունը գերազանցում է 10-ը էջը, այն ենթակա է փոխհատուցման՝ պատճենահանման վճարի չափով: Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ Անշարժ գույքի պետական կադաստրից, Պետական արխիվից, դատարաններից, Ոստիկանությունից և իրավապահ հարակից մարմիններից տեղեկատվության հարցումն ենթադրում է հատուկ գին՝ սկսած 2 եվրո յուրաքանչյուր էջի համար, որը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:
- Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ հարցվող տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել, եթե վերջինս պարունակում է 1) պետական, ծառայողական, առևտրային, բանկային գաղտնիք, 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ, 4) բացահայտում է մասնագիտական

գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք), 5) խախտում է հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները: Այնուամենայնիվ, գաղտնի տեղեկատվության ցանկը ամբողջական չէ և յուրաքանչյուր պետական մարմին մշակել է իր իսկ իրավասության տակ գտնվող մարմնի գաղտնի տեղեկատվության ցանկը: Գաղտնի տեղեկատվության կարգավորումները լիովին չեն համապատասխանում միջազգային չափանիշներին:

- Համաձայն «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N1521-Ն որոշման՝ նախարարությունների բոլոր կայքէջերը ունեն «քաղաքականություն» և «իրավական ակտեր» բաժինները:
- Կառավարությունը հրապարակում է իրավական ակտերի կամ քաղաքականությունների, Կառավարության ռազմավարական ծրագրերի նախագծերը, իսկ արդարադատության նախարարությունը ներակայացնում է իր կողմից մշակված օրենքների նախագծերը (որը չի մշակվել որևէ մեկ այլ նախարարության կողմից):
- Սակայն, նոր օրենքների նախագծերը, դրանց լրացումները կամ քաղաքականության փաստաթղթերը երբեմն նախապես չեն հրապարակվում նախարարությունների կայքէջերում: Նախարարությունների պաշտոնական կայքէջերի հղումները հասանելի են Կառավարության կայքի գլխավոր էջում՝ <http://gov.am/en/links/> հղումով:
- Պետական-սոցիալ-տնտեսական գործընկերների եռակողմ հանձնաժողովների՝ քաղաքականության և օրենսդրության մշակման հարցերով գործունեությունը կարգավորող համապատասխան մարմին չկա: Նմանատիպ հարցերը քննարկվում և կազմակերպվում են պետական գործակալությունների միջոցով, որոնց հիմնական խնդիրը կարգավորումը չէ:

Քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին առնչվող ներկա իրավական շրջանակը և Հայաստանի Կառավարության հաշվետվողականությունը լիովին բավարար են արդյունավետ կառավարման ներքո զետեղված պահանջներն իրականացնելու համար: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության և կառավարության միջև բաց հաղորդակցության մշակույթը, ինչպես նաև այս ցուցիչի ներքո պետական մարմինների պարտականությունների կատարման պրակտիկան դեռևս կատարելագործման կարիք ունեն:

ՑՈՒՑԻՉ 2 : ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ և ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Զինված հակամարտություն,
- բռնի ցույցեր,
- ներքին կոնֆլիկտների սրացում. էթնիկ, կրոնական կամ տարածաշրջանային
- քաղաքացիական ըմբոստություն,
- բռնի գործողությունների սրացում
- քաղաքացիական կոնֆլիկտի սրացում (բացառությամբ՝ հողին առնչվող կոնֆլիկտներ)
- կառավարության կայունություն,
- ներքին հակամարտություն,
- արտաքին հակամարտություն:

Զինված համակարտություն

2014

2014 թվականին Հայաստանի Զինված ուժերում գրանցվել է 46 մահվան դեպք, որից 28-ը տեղի է ունեցել մարտական դաշտում. 26 զինվորական մահացել են զինադադարի խախտման հետևանքով, 2 զինվոր՝ արկի պայթյունի հետևանքով:

2014 թվականի առաջնագծում իրավիճակը լարված էր մասնավորապես՝ հունվար, մարտ, հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին:

Հարկ է նշել, որ չնայած գրանցվել են դիվերսիոն ներթափանցման փորձեր, ինչի հետևաքնով հայկական կողմը զոհեր է ունեցել, այնուամենայնիվ, հայ-ադրբեջանական հակամարտության էսկալացիան գրանցվել է հուլիս-օգոստոս ամիսներին: Այս ժամանակահատվածում, դիվիզիոն ներթափանցումների քանակն ավելացել է, ժամանակահատվածն նույնիսկ անվանվել է միկրո պատերազմ: 1994 թվականի հրադադարից ի վեր առաջին անգամն էր, որ թշնամին խոցեց Մի-24 ուղղաթիռը, ինչի հետևանքով 3 անձնակազմի անդամներ զոհվեցին:

2015 թվականին իրավիճակն առաջնագծում շարունակում էր լարված մնալ՝ հրադադարի հաճախակի խախտումներով:

2016 թվականը դարձավ վճռորոշ դարաբաղա-ադրբեջանական հակամարտության առումով: 2016 թվականի ապրիլի 2-ի լույս առավոտյան, Ադրբեջանի զինված ուժերը՝ չնայած 1994 թվականի մայիսի կնքված Զինադադարի համաձայնագրի, լայնածավալ անխնա հարձակումներ ծավալեցին դարաբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: 2016 թվականի ապրիլի 2-ին, Ադրբեջանի զինված ուժերը մի քանի դիրքեր գրավեցին Թապկարակոյունլի-Թալիշ ուղղությամբ:

Նույն օրը Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տարածեղ հայտարարություն՝ նշելով որ, «Մեյսուլան գյուլը և Թալիշ գյուլի հարակից բարձունքները ամբողջովին մաքրվել են թշնամու զորքերից»: 2016 թվականի ապրիլի 3-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շփման գծի հյուսիս-հարավ հատվածում որոշ դիրքեր հետ են վերադարձվել:

2016 թվականի ապրիլի 5-ի կեսօրին Ռուսաստանի միջնորդությամբ հրադարարի համաձայնագիր կնքվեց և ռազմական գործողությունները դադարեցվեցին՝ չնայած այն հանգամանքին, որ դրան հաջորդող օրերին շփման գծում ռմբակոծությունը ժամանակ առ ժամանակ շարունակական բնույթ կրեց, ինչը հանգեցրեց զոհերի և վիրավորների:

Քառօրյա պատերազմի ընթացքում հայկական կողմը ունեցավ 92 կորուստ, որից 77-ը սպանվեցին ռազմական գործողությունների արդյունքում, 15-ը դիտարկվեց որպես ոչ մարտական կորուստներ, որից 4-ը ԼՂՀ-ի խաղաղ բնակիչներն էին³:

Իրավիկաճը առաջնագծում, ինչպես նաև Ղարաբաղի հետ շարունակվող հակամարտությունը, մասնավորապես 2016 թվականի սկզբին տեղի ունեցող էսկալացիան մեծ ազդեղություն է ունենում Հայաստանի ներքին սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի վրա:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Վերջին 3 տարիների ընթացքում Հայաստանում տեղի ունեցող ցույցերը միշտ ուղեկցվում են ոստիկականների ակտիվ մասնակցությամբ և դերակատարմամբ, որոնք ավարտվում են զոհերով և վիրավորներով:

³ <http://hetq.am/arm/news/67284/pn-garorya-paterazmi-orerin-haykakan-koxmy-92-zoh-e-unecel.html>

2014 թվականի ողջ ընթացքում իշխանությունները անընդհատ միջամտել են խաղաղ ցույցերի անցկացմանը: Համաձայն մարդու իրավունքների պաշտպանության տարբեր խմբերի զեկույցների՝ 2014 թվականի առաջին կիսամյակում Երևանում կենսաթոշակային բարեփոխումների, շրջակա միջավայրի խնդիրների, կոմունալ վճարումներ և այլ խնդիրների վերաբերյալ անցկացված ցույցերի ընթացքում առնվազն 70 ակտիվիստներ են բերման ենթարկվել: Բերման ենթարկված ակտիվիստների մեծ մասը ազատ են արձակվել մեկ օրվա ընթացքում, նրանցից մի քանիսն ենթարկվել են վարչական պատասխանատվության:

Երևանի մետրոպոլիտենի 3 աշխատակիցներ հեռացվեցին աշխատանքից, այն բանից հետո, երբ մասնակցեցին փետրվարին Երևանում անցկացվող փոփոխությունների դեմ անցկացվող ցույցերին⁴:

Ավելի քան 100 քաղաքացիական ակտիվիստների ձերբակալվեցին 2015 թվականի հունիսի 23-ին՝ Էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմանն ուղղված բողոքի ակցիայի ժամանակ: Ոստիկանությունն այդ օրերին ուժ կիրառեց խաղաղ հավաքի մասնակիցներին ցրելու համար: Ցույցի ժամանակ ջրցան մեքենաներ օգտագործվեցին և կիրառվեց ֆիզիկական ուժ, ինչի արդյունքում ակտիվիստները ստացան մարմնական վնասվածքներ: Ակտիվիստները սակայն վնասվածքներ են ստացել նաև բերման ենթարկվելու և ոստիկանության բաժիններում պահվելու ընթացքում: Ոստիկանական գործողությունների ընթացքում մասնավորապես թիրախավորվել էին լրագրողները և նրանց տեսա-լուսանկարահանող սարքավորումները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ոստիկանության գործողությունները գնահատեց անհամաչափ:

⁴ https://www.hrw.org/sites/default/files/world_report_download/wr2015_web.pdf

Չնայած դեպքի առթիվ նախաքննություն է ձեռնարկվել՝ 2015 թվականի հունիսի 23-ի դեպքերի նախաքննությունը բավարար արդյունքներ չի ապահովել:

2016 թվականին նույնպես տեղի են ունեցել մի շարք ցույցեր, որոնք ուղեկցվել են ոստիկանության միջամտությամբ և ուժի կիրառմամբ:

2017 թվականի հուլիսի 17-ին սկսվեցին մի շարք ցույցեր, երբ զինված խումբը գրվավեց Երևանի Էրեբունի վարչական շրջանի ոստիկանության պարեկապահակային գունդը՝ սպանելով մեկ և պատանդ վերցնելով մի քանի այլ ոստիկանների՝ կառավարությունից պահանջելով քաղաքական փոխզիջումների գնալ:

Մինչ զինյալները հանձնվեցին՝ հուլիս ամսին ի պաշտպանություն նրանց կատարվող հանրային աջակցությունը վերածվեց լայնամասշտաբ բողոքի ակցիայի Երևանում:

2016 թվականի հուլիսի 29-ի գիշերը ոստիկանությունն անհամաչափ ուժ կիրառեց խաղաղ հավաքի մասնակիցներին ցրելու համար: Այլ հավաքները տեղի են ունեցել առանց միջադեպի և ոստիկանների միջամտության:

2016 թվականի հուլիսի 29-ին ոստիկանությունը կիրառել է ձայնալուսային նռնակներ, ինչի արդյունքում վիրավորվել են մի շարք ցուցարարներ, որոնց թվում կային նաև լրագրողներ: Ոստիկանությունը նաև ծեծի է ենթարկել լրագրողների և ցուցարարների, ինչպես նաև բերման է ենթարկել մի շարք քաղաքացիների:

2016 թվականի հուլիսի 29-ի դեպքերի առթիվ նախաքննություն է սկսվել և այն դեռևս գտնվում է նախնական փուլում:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կառավարումը բաղկացած է ավանդույթներից և կառույցներից, որոնցով միջոցով երկրում իշխանությունը իրականացվում է:

Սա ենթադրում է մի գործընթաց, որով ընտրվում, ստուգվում և փոխարինվում են կառավարությունները, կառավարության կարողությունը՝ հստակ քաղաքականությունները արդյունավետորեն ձևավորելու և իրականացնելու, ինչպես նաև քաղաքացիների և պետության հարգանքը այն հաստատությունների նկատմամբ, որոնք կառավարում են տնտեսական և սոցիալական փոխազդեցությունները:

Համաձայն Մաքս Վեբերի քաղաքական տեսությունների՝ քաղաքական կայունությունը կախված է կառավարության կողմից օրինավոր ֆիզիկական ուժի կիրառմամբ: Եթե կառավարությունը չի կարող ապահովել մարդկանց տրամադրվող հիմնական ծառայությունները, ինչպիսին է օրինակ՝ անվտանգությունը, այն կորցնում է օրենքներ կիրարկելու իրավասությունը և նման դեպքում քաղաքական ապակայունության սպառնալիք կսկսվի: Քաղաքական անկայունությունը ասոցացվում է ձախողված պետություն հասկացության հետ⁵:

2015 և 2016 թվականների վերոնշյալ դեպքերը ցույց են տալիս, որ Հայաստանի կառավարությունը դեռ բավականին հեռու է կայուն կոչվելուց: Հավանականություն կար և դեռևս կա, որ կառավարությունը կարող է ապակայունանալ կամ գահընկեց արվի՝ հակասահմանադրական կամ այլ բռնի միջոցներով, որը ուղղակի առումով պայմանավորված է երկրում տիրող սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական իրավիճակով:

Հարկ է առանձնացնել Հայաստանի կառավարության կայունության երկու կարևորագույն գործոնները: Առաջին գործոնը դա Հայաստանի աճող արտաքին խոցելիությունն է, որը բխում է Ռուսաստանից:

⁵ <https://www.reference.com/government-politics/definition-political-instability-da09becc7984e9a6#>

Երկրորդ գործոնը օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի անորոշ կանխատեսումն է, որը տապալվեց 2015 թվականին⁶:

Կարևորագույն խնդիրներից է նաև ներքին ինստիտուցիոնալ անկայունությունը: Օրինակ՝ վերջին երեք տարիների ընթացքում Արդարադատության նախարարը երեք անգամ փոխվել է, ինչը բացասական ազդեցություն է ունեցել ինչպես նախարարության կողմից ընդունած ռազմավարությունների, այնպես էլ նախորդ նախարարի և նրա վարչակազմի կողմից ձեռնարկած գործողությունների վրա:

Համաձայն հայտնի բրիտանացի փորձագետ Թոմ դը Վաալի՝ ներկայումս Հայաստանն ամենալուրջ ճգնաժամն է ապրում վերջին 8 տարիների ընթացքում: Իշխանությունների անկարողունակությունը քաղաքացիների վստահությունը շահելու գործում կարելի է համարել ճգնաժամի գործոններից մեկը և դրա վառ ապացույներից է էքստրիմիստ զինված խմբի կողմից Երևանի ոստիկանության պարեկապահակային գնդի գրավումն է:

Հաջորդ գործոնը, որը նպաստեց Հայաստանում ճգնաժամի զարգացմանը, Լեռնային Ղարաբաղի հաղթանակն էր, քանի որ վերջինս ամրապնդեց Հայաստանում համազգեստ կրող անձանց դիրքերը:

Ըստ Թոմ դը Վաալի՝ 2016 թվականի հուլիսի ճգնաժամը ձևավորեց կարծիք, որ ժողովրդավարության քաղաքականությունը իրեն սպառել է և ուժի կիրառումը միանգամայն ընդունելի է: Ճգնաժամը մեկ անգամ ևս ապացուցեց, որ հայկական իշխանությունները օժտված են ոչ բավարար ժողովրդավարությամբ և Հայաստանում չկա կազմակերպված, համակարգված ընդդիմություն: Վերջինս նոր խոչնդոտներ առաջացրեց խաղաղ հավաքների անցկացման համար: Հայաստանի համար այս իրավիճակից միայնակ դուրս գալը բարդ գործընթաց է: Ռուսաստանը՝

⁶ https://www.moodys.com/research/Moodys-downgrades-Armenias-government-bond-rating-to-B1-changes-the-PR_345220

Հայաստանի հիմնական դաշնակիցը, նախընտրում է օգտագործել հարկադրական մեթոդներ: Ներքին մտահոգությունները և արտաքին անորոշությունները հաղթահարելու համար Հայաստանին անհրաժեշտ է միջազգային գործընկերների և հայկական սփյուռքի աջակցությունը⁷:

⁷<http://orientcenter.net/hy/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B6-%D5%A1%D5%BA%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%A1%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%AC%D5%B8%D6%82%D6%80%D5%BB-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1/>

Ցուցիչ 3: Կարգադրիչ որակ

Ցուրաքանչյուր բարեփոխման նպատակներն և խնդիրները.

Օրինակ՝

- *Բարելավել հանրային ծառայությունների մատուցումը,*
- *բարձրացնել հրապարակայնությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը,*
- *բարձրացնել արժանահավատությունը և կանխատեսելիությունը (հրավական որոշակիությունը)*
- *ապահովել արդյունավետություն*
- *այլ, մասնավորեցնել*

Այս ցուցիչը չափում է կառավարության ողջամիտ քաղաքականություններ և կարգավորումներ ձևավորելու և իրականացնելու կարողությունը, որը խթանում է մասնավոր հատվածի զարգացմանը:

Հայաստանի կառավարությունը ձեռնարկել է մի շարք քայլեր՝ կառավարման որակ ապահովելու համար: Մասնավորապես՝ կառավարությունը նպատակ հետապնդելով բարձրացնել հանրային ինստիտուտների, ինչպես նաև պաշտոնատար անձանց նկատմամբ հասարակության վստահությունը, ձեռնարկել է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին հանրային ինստիտուտների թափանցիկության ապահովմանը և որոնք խթանում էին մասնավոր հատվածի զարգացմանը՝ հանրային և քաղաքացիական ծառայությունների որակի բարձրացման հետ մեկտեղ.

- 2010 թվականից ներդրվեց առցանց համակարգ, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս հետևելու պետական մարմիններ ուղարկված գրությունների ընթացքին: Միայն ընթացիկ տարում 41000

դիմումատուներ համակարգի միջոցով հետևել են իրենց դիմումի ընթացքին:

- Առցանց համակարգում բաց և հասանելի են կառավարության և վարչապետի բոլոր որոշումները: Ավելին, ամեն ոք կարող է նախապես ծանոթանալ բոլոր այն հարցերին և նախագծերին, որոնք կառավարությունը պատրաստվում է քննարկել առաջիկա նիստի ընթացքում. կառավարության նիստի օրակարգը և բոլոր հարցերը նախօրոք տեղադրվում են առցանց համակարգում: 2011 թ. օգոստոսի դրությամբ կայքի «ՀՀ կառավարության որոշումները» հատվածի այցելուների թիվը եղել է մոտ 495000, «ՀՀ վարչապետի որոշումները» հատվածի այցելուների թիվը՝ 136000, «ՀՀ կառավարության նիստի օրակարգը» հատվածի այցելուների թիվը՝ 139000:
- Կառավարությունը թափանցիկություն է ապահովել նաև պետական գնումների գործընթացում: Բացի գնումների համակարգը ներկայացնող արդեն իսկ գործող առցանց համակարգից, որը հնարավորություն է տալիս տեսնել գնումների հայտարարությունները և բոլոր ընթացակարգերը, 2010 թվականից հանրությանը հասանելի է նաև պետության կողմից մեկ աղբյուրից առանց մրցույթի իրականացվող գնումների տեղեկատվությունը:
- Հանրության համար բաց և հասանելի է նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող բոլոր ծրագրերի, պայմանագրերի և ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը: 2011 թ. դրությամբ այս հատվածն արդեն ունեցել է շուրջ 16000 այցելու :
- Կառավարությունը հասանելի է դարձրել նաև մի շարք ռեեստրներ և ցանկեր, մասնավորապես՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը, օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված հանքային իրավունքների ցանկը, գործող

ուսումնասիրության արտոնագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, ՀՀ տարածքի ոչ մետաղային և մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի ցուցակը:

- Կառավարության որոշման նախագիծ մշակող մարմիններն այսուհետև նախագիծը տեղադրում են իրենց ինտերնետային կայքում, որպեսզի հանրությունը դեռևս քննարկման փուլում իրազեկվի նախագծի վերաբերյալ և իր առաջարկություններով մասնակից դառնա կառավարության որոշումների ընդունմանը:

Պետական կառավարման համակարգում հաշվետվողականության ապահովման նպատակով ներդրվել են նոր սկզբունքներ և մոտեցումներ.

- Ցանկացած միջոցառում կամ միջոցառումների ծրագիր, որ ներկայացվում է որևէ պետական մարմնի կողմից, պետք է պարունակի ծրագրի արդյունքների հստակ ձևակերպում, ընդ որում այդ արդյունքները պետք է լինեն չափելի.
- Պետական մարմինները պարբերաբար ներկայացնում են կատարողական հաշվետվություն, որոնց հիման վրա գնահատվում է նրանց իրականացրած աշխատանքը,
- Կատարողական հաշվետվություն հիման վրա գնատահատվում է ոչ միայն պետական մարմնի կողմից, այլ նաև ամեն մի աշխատակցի կատարած աշխատանքը

Պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը պետական հատվածում նախաձեռնեց մասնավոր հատվածին բնորոշ գործիքների և սկզբունքների ներդրում:

- Պետական ձեռնարկություններում կառավարությունը նախաձեռնել է կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրման գործընթացը:

2010 թվականի դեկտեմբերին կառավարությունը հավանության արժանացրեց Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը:

- 2008 թվականին կառավարության հավանությանն արժանացավ պետություն մասնավոր հատված համագործակցության հայեցակարգը: Նպատակը պետության և մասնավոր հատվածի գործընկերության (ՊՄԳ) մոդելի միջոցով խոշոր ներդրումային ծրագրերի իրականացման նախադրյալների ստեղծումն էր: Պետական և մասնավոր հատվածների գործընկերությունը ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների մատուցման եղանակ է, որը ներգրավում է մասնավոր հատվածի ռեսուրսները և խրախուսման միջոցները: Սահմանափակ մրցակցության պայմաններում կառավարությունը հանդես է գալիս որպես պայմանագրի կողմ և կարգավորիչ:

ՊՄԳ մոդելի թերևս ամենավառ օրինակը «Տաթևի վերածնունդ» ծրագիրն է: Ծրագրի ընդհանուր արժեքը 45 մլն ԱՄՆ դոլար է: Ծրագրի ֆինանսավորման համար կատարվել է հանգանակություն, ինչպես նաև մշակվել է համապատասխան բիզնես պլան: Ծրագրի իրականացման առաջին փուլում 2010 թվականին պետության կողմից՝

- հիմնանորոգվեց Շինուհայր-Հալիձոր ճանապարհը,
 - կառուցվեց գազամուղը,
- իսկ մասնավոր հատվածի կողմից՝
- կառուցվեց Տաթևի վանքի հետ կապող ճոպանուղին
 - իրականացվեցին վանքի բարեկարգման և նորոգման աշխատանքներ:

Օրենսդրական կարգավորումների ազգային կենտրոն

Հայաստանի կառավարության որոշմամբ 2011 թվականի հոկտեմբերի 13-ին ստեղծվեց Հայաստանի Հանրապետության կառավարության

աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որի հիմնական նպատակը գործարար միջավայրի և քաղաքացիների համար մախատեսված իրավական նորմատիվ ակտերի կարգավորումների կրճատումն է:

2012 թվականի Բարեփոխումների խորհուրդը սկսեց իր գործունեությունը՝ հաստատելով 2012-2013 թվականների համար նախատեսված աշխատակարգը, որը վերանայում էր կոմունալ ծառայությունների ոլորտը, տրանսպորտի, ինչպես նաև առողջապահության ոլորտի կարգավորումները: 2013 թվականին առաջնային էին համարվում հետևյալ ոլորտները՝ հարկային, մաքսային, մշակութային, սոցիալական, ձեռնարկատիրական, ինչպես նաև արտաքին և միջազգային հարաբերություններ⁸:

2014 թվականին խորհրդի կողմից վերանայվեցին ջրային տնտեսության կառավարման, գյուղատնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության, իրավապահ և արդարադատության համակարգի ոլորտները: Ավելին՝ 2014 թվականին ավարտվեց հետևյալ ոլորտների վերանայումը. Էներգետիկա բնական պաշարներ, հողային հարաբերություններ, քաղաքաշինություն, անշարժ գույքի կադաստր, կրթություն, սպորտի և երիտասարդության հարցեր⁹:

2015 թվականի «Գիլյոտին կարգավորիչ» ծրագրի շրջանակներում ներառվեցին հետևյալ ոլորտներին վերաբերելի իրավական ակտերը՝ քաղաքացիական ավիացիա, ֆինանսներ, պետական գույքի կառավարում, պետական և տեղական ինքնակառավարում, տնտեսական մրցակցության

⁸ http://www.regulations.am/uploads/FINAL_Sixth_Project_Progress_Report.pdf

⁹ http://www.regulations.am/uploads/NCLR_Project_Progress_Report_01_07_30_09_2014.pdf

պաշտպանություն, ֆինանսական շուկաներ, գիտություն և
հաղորդակցություն

Ցուցիչ 4: ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Արդյոք պետական/տեղական իշխանությունները պետք է հրապարակեն մանրամասն ֆինանսական տարեկան հաշվետվություններ և ազգային, տարածաշրջանային և/կամ տեղական բյուջեի կանխատեսումներ՝ ներառելով ծախսերի անկման վերաբերյալ տեղեկատվություն որպես արաջարկված օրենսդրության կամ քաղաքականության արդյունք:

Հայաստանի Հանրապետությունում բյուջետավորման համակարգը կազմված է պետական և համայնքային բյուջեից: Կառավարությունը պատասխանատու է պետական բյուջեի մասին օրենքի նախագծի մշակման, իսկ համայնքների ղեկավարները՝ համայնքային բյուջեի օրենքի նախագծի մշակման համար:

Բյուջեի նախագծերը մշակվում են ՀՀ կառավարության գործողությունների, միջնաժամկետ ծախսերի, ինչպես նաև համայնքային զարգացման ծրագրերի շրջանակներում: Պետական բյուջն հաստատվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

«Հայաստանի Հանրապետության բյուջետավորման մասին» ՀՀ օրենքը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր պետական մարմին մի մարմնի մասով բյուջեն, ինչպես նաև ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը մանրամասնորեն հրապարակի՝ համաձայն տարեկան աշխատանքային ծրագրի:

Համաձայն Օրենքի հոդված 25-ի՝ Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարողականի մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Պետական և համայնքային բյուջեների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակվում են ֆինանսների նախարարության

պաշտոնական կայքէջում¹⁰: Սա ներառում է բյուջեի կատարման, պետական բյուջեի կատարման, ծախսերի, ինչպես նաև բյուջեի դեֆիցիտի վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն: Հաշվետվությունների տեսքով տրամադրված տեղեկատվությունը հրապարակվում է յուրաքանչյուր տարի՝ եռամսյակային և կես տարված կտրվածքով:

Ինքնակառավարման մասին օրենքը պարտավորեցնում է հրապարակել բյուջեի ամփոփումը, ինչպես նաև ծախսերի հաշվետվությունը:

Թափանցիկության և հրապարակայնության առումով՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունները հետևողականորեն հրապարակվում են և հանրությունը ունի դրանց հետևելու հասանելիություն: Ինչ վերաբերվում է այդ զեկույցների բովանդակությանը, հարկ է նշել, որ այդ տեսանկյունից վերջիններս ավելի կասկածելի են և ենթակա են ավելի մանրամասն և առանձին հետազոտության:

ՑՈՒՑԻՉ 5: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

- *երկարաժամկետ և կարճաժամկետ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիր,*
- *նմանատիպ ծրագրերի, ռազմավարական փաստաթղթերի քանակը,*
- *նմանատիպ ծրագրերի մանրամասն նկարագրություն՝ ծրագրի նպատակն և արդյունքների, ինչպես նաև թիրախային ոլորտների վերաբերյալ և այլն,*
- *ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների քանակի վերաբերյալ,*
- *նմանատիպ գործողությունների մանրամասն նկարագրություն,*
- *գործողությունների կարտարման նախանշված ժամակահատված,*
- *ակնկալվող արդյունքներ,*

¹⁰ <http://www.mfe.am/index.php?cat=76&lang=1>

- *ծրագրի նախաձեռնողներ և իրականացնող գործընկերներ, ծրագրի ֆինանսավորում:*

1990 ական թվականներին, ինչպես այլ հետխորհրդային երկրներ, Հայաստանը նույնպես թերագնահատեց կոռուպցիայի կործանարար ազդեցությունը իր երկրի ժողովրդավարացման և շուկայի զարգացման վրա: Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարը պաշտոնապես հռչակվեց 2000-ական թվականներին, երբ տնտեսական, քաղաքական և սոցիալական բարեփոխումներ իրականացմանը զուգընթաց կոռուպցիան համարվեց որպես չափազանց լուրջ չոխնդոտ: Մա հաստատվեց մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում, օրինակներից մեկն է Համաշխարհային բանկը:

Հայաստանում կոռուպցիային առնչվող առաջին պաշտոնական փաստաթուղթը 1992 թվականի սեպտեմբերի 1-ին ընդունված Նախագահ Լևոն տեր-Պետրոսյանի թիվ ՆՀ-151 «Պաշտոնի չարաշահման և կոռուպցիայի դեմ պայքարի ուժեղացում» հրամանագիրն էր: Այս հրամանագիրը նպատակաուղղված էր կարգավորել պետական ծառայողների կադրային համալրման գործընթացները, ինչպես նաև վերացնել կադրային համալրման գործընթացում պաշտոնի չարաշահումները: Այնուամենայնիվ, հրամանագիրը ի կատար ածելու համար համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Հայաստանի առաջին հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա գործողությունների ծրագիրը ուժի մեջ մտավ 2003 թվականի դեկտեմբերի 10-ին: Համենայն դեպս ենթադրվում է, որ կառավարությունը այն ընդունել է փակ դռների հետևում՝ առանց հաշվի առնելու այլ շահառուների կարծիքը¹¹:

ՀՀ Նախագահի 2004 թվականի հրամանագրով ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծումը նպատակ էր հետադնդում աջակցել Հայաստանի կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը:

Վերլուծությունները, համենայն դեպս բացահայտում են, որ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդն ամբողջովին չէր համախմբում արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության 3 հիմնական բաղադրիչները (կանխարգելում, բացահայտում և հանրային աջակցություն): Բացահայտումներին վերաբերող մի շարք միջազգայնորեն հայտնի դրույթներ, ինչպիսիք են օրինակ քրեական և վարչական տուգանքները, ինչպես նաև գույքի և եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց կողմից՝ իրենց գույքի և եկամուտների մասին կեղծ տեղեկատվություն տրամադրելու առնչությամբ վերջիններիս պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները բացակայում են Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարությունից:

Չնայած հակակոռուպցիոն ռազմավարության առանցքում կարևորվում է հանրային ընկալումը «հարգել օրենքը» հասկացության նկատմամբ՝ հստակ չէ՝ ինչպես պետք է հասնել դրան:

Եթե կանխարգելիչ գործողությունները չեն ուղեկցվում կոռուպցիոն հանցագործությունների արդյունավետ բացահայտումներով և դրանց մեղավորները չեն պատժվում և որի մասին հանրությունը պետք է

¹¹ Anti-Corruption policy in Armenia, Center for regional development, Transparency international Armenia, 2006

տեղեկացվի, Կառավարության հակակոռուպցիոն ջանքերի համար հանրային աջակցություն չի ցուցաբերվի և արդյունավետություն, արդյունքում, չի գրանցվում:

Հակակոռուպցիոն գործողությունների ծրագիրը ներառում էր միջոցառումների ցանկ, որոնք պետք է ապահովեին հակակոռուպցիոն խորհրդի գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացում: Հայաստանի հակակոռուպցիոն խորհրդի գործողությունների ծրագրում ինկորպորացված էր մոտավորապես 100 միջոցառումներ:

Միջոցառումների մեծ մասը (44) ուղղված էր տնտեսություն ոլորտին, 7-ը՝ քաղաքական, 13-ը՝ հանրային կառավարման ոլորտին, 7-ը՝ իրավապահ մարմիններին և 10-ը՝ դատական համակարգին: Միջոցառումների զգալի մասը նախատեսված էր իրականացնել 2003 թվականի դեկտեմբերից 2006 թվականի ավարտ ընկած ժամանակահատվածում: 6 միջոցառումներ նախատեսված էր իրականացնել պարբերաբար (նայել գործողությունների ծրագրի 1.2, 2.2, 2.3, 4.11, 7.2 և 8.4 կետերը): Ընդհանուր առմամբ, ավելի քան 50 օրենքներ և ենթօրենսդրական ակտեր են ընդունվել որպես հակակոռուպցիոն միջոցառումների բաղկացուցիչ մաս, որոնք ներառվել են Կոռուպցիայի դեմ պայքարի 2003-2007 թվականների գործողությունների ծրագրում, կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական մարմիններ են ստեղծվել, ստորագրվել և վավերացվել են միջազգային հակակոռուպցիոն համաձայնագրեր և պետությունն անդամակցել է մի շարք կազմակերպությունների, որոնք հնարավորություն են ընձեռել իրականացնել միջազգային համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարում:

Պետական ծառայությունում պատասխանատվության, թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների ներդրման և դրանց հետագա զարգացման առումով հարկ է նշել, որ Հայաստանը ներդրեց և օրենքներով կարգավորեց տարբեր տեսակի պետական, հանրային և համայնքային ծառայություններ: Պետական և համայնքային ծառայությունում

անձնակազմի ընտրությունը և խթանումը կատարվում է մրցակցության հիմունքներով:

Պետական և համայնքային աշխատողների վարձատրությունը կարգավորվում է օրենքով և կապված է տվյալ անձի պաշտոնի, որակավորման և փորձի հետ: Պետական և համայնքային ծառայողների համար ստեղծվել է վերապատրաստման հաստատություններ և մշակվել են նոր վերապատրաստման ծրագրեր:

Յուրաքանչյուր ծառայության առանձնահատկություններով պայմանավորված ընդունվել են քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնանգրքեր, ինչպես նաև էթիկայի կանոնագրքեր՝ դատավորների, դատախազների, դիվանագիական ծառայություն իրականացնող անձանց և այլ պետական ծառայողների համար: Իրավական շահերին կամ անձին առնչվող փաստաթղթերում թերի կամ խեղաթյուրված տեղեկատվություն տրամադրելու համար պաշտոնատար անձանց համար նախատեսվել են տուգանքներ:

2004-2007 թվականներին Կառավարության քաղաքականությունը նպատակ էր հետապնդում պետական մարմիններում ստեղծել հասարակայնության հետ կապերի վարչություն, որոնք ուղղված պետք է լինեին տեղեկտվության մշակման և տրամադրման, ինչպես նաև կարողությունների զարգացման համար:

Մասնակցային հանրային կառավարման բազմազան գործիքակազմեր են մշակվել և ներկայացվել, որոնք հետագայում դարձել են նախադեպեր և այժմ օգտագործվում են տարբեր ռազմավարական ծրագրեր մշակելու համար: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներգրավված են մեծամասշտաբ պետական ծրագրերի կառավարման խորհուրդներում¹²:

¹² The Republic Of Armenia Anti-Corruption Strategy And Its Implementation Action Plan For 2009-2012, Yerevan 2009

**2009-2012 թվականների երկրորդ հակակոռուպցիոն քաղաքականությունն
Կառավարության կողմից ընդունվել է 2009 թվականին:**

Հայաստանի Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների իրականացման ծրագրի հիմնական ուղղվածությունները և թիրախային խմբերը ամրագրված էին արդյունավետ հանրային կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի պարտավորությունների շրջանակում, որոնք որդեգրվել են ՀՀ Նախագահի ընտրական պլատֆորմով և Կառավարության ծրագրով: Մինևույն ժամանակ Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների իրականացման ծրագրի նպատակները և խնդիրները առանձնացվել էին ակնկալվող արդյունքների վերջնական (ազդեցության), միջանկյալ եւ ֆակտորիալ արդյունքների մակարդակներով:

Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների իրականացման ծրագրով նախատեսված 2012 թվականի թիրախների վերջնական և միջանկյալ արդյունքները համապատասխանում էին 2007 թվականի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարության արդյունավետության ցուցանիշներին:

Կառավարության արդյունավետության միջին ցուցանիշները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շրջանում ավելի բնորոշ էին Բուլղարիային, Ռումինիային և Հունգարիային: Ուստի այս երկրների ցուցանիշները հիմնականում համընկնում էին Հայաստանի 2012 թվականի ցուցանիշների հետ:

Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրում ներառված ոլորտների կարգավորող **շարունակական օրենսդրական կարգավորումները** և ոլորտային զարգացումը կարևորվում էին **կոռուպցիայի դեմ պայքարի** տեսանկյունից:

Մասնավորապես՝ սա վերաբերվում է կարգավորիչ մեխանիզմների և ընթացակարգերի հետագա պարզեցմանը և հստակեցմանը՝ միջազգային չափանիշներին և լավագույն փորձերին, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն առնչվող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում համապատասխան դրույթների ընդունմանը, օրենսդրության կիրարկման համապատասխան մեխանիզմների ընդունմանը, օրենքով նախատեսված գործառույթները թերի կատարելու համար համապատասխան միջոցների ներդրմանը, ինչպես նաև օրենսդրությունում հակասությունների և վերարտադրությունների բացահայտմանը և վերացմանը:

Հանրային կառավարման մարմինների արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականությանն ապահովումն նույնպես կարևորվում էր կոռուպցիայի դեմ պայքարում:

Այն վերաբերվում էր տարբեր պետական մարմինների գործառույթների տարանջատմանը՝ մասնավորապես՝ դրանց կառույցների բարելավում, պետական մարմինների աշխատակիցների համար պրոֆեսիոնալ չափանիշների սահմանում, անձնակազմի կարողությունների զարգացում, աշխատակիցների արդյունավետության գնահատման համակարգի ներդրում, պետական ծառայողների սոցիալական ապահովագրության համակարգի բարելավում, պետական և համայնքային ծառայողների վարքագծի կանոնակարգերի և շահերի բախման օրենսդրական կարգավորում, հանրային ծառայության որակի չափանիշների ներդրում, դրանց համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և լավագույն փորձին, քաղաքացիների՝ հանրային ծառայությունների ընթացակարգերի և որակի ընկալման և բավարարման մակարդակի գնահատում, պետական մարմինների գործառույթները վերահսկող ընթացակարգերի բարելավում, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության և արդյունավետ հաղորդակցության ապահովում:

Կոռուպցիայի քրեականացման առաջնահերթությունների մեջ պետք է նշել կոռուպցիոն հանցագործությունների սահմանում՝ միջազգայնորեն ընդունված մոտեցումներին համաձայն, որոշակի հանցագործությունների նկարագրության հստակեցում, համապատասխան պատժամիջոցների և սահմանափակումների կարգավիճակների նկարագրությունների հստակեցում, վկաների, տուժողների, փորձագետների և իրազեկիչների պաշտպանության ներդրում, կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության արդունավետություն, իրավապահ մարմինների կարողությունների զարգացում, ինչպես նաև իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության հաստատությունների միջև համագործակցության հաստատում:

Հայաստանում պետական հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ և համապարփակ իրականացումը ապահովում էր **Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը**, որը ստեղծվել էր կարգավորելու կոռուպցիայի դեմ պայքարում ներառված պետական մարմինների գործունեությունը, վերացնելու կոռուպցիայի պատճառները, ինչպես նաև բարելավելու կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Հակակոռուպցիոն խորհրդին առնընթեր ստեղծվեց **Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովը** (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովը ղեկավարվում էր ՀՀ Նախագահի օգնականի կողմից և կազմված էր խորհրդարանական խմբակցությունների ներկայացուցիչներից և խմբերից, հասարակական կազմակերպություններից մի քանի պետական կառավարման մարմիններից: Հանձնաժողովի նախագահը և անդամները Հանձնաժողովում աշխատել են առանց վարձատրության:

Երրորդ և ընթացիկ 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարություն թվականների համար

ՀՀ Կառավարությունը հաստատել է 2015-2018 թվականների երրորդ հակակոռուպցիոն ռազմավարությունը 2015 թվականի սեպտեմբերին: Սույն ռազմավարությամբ առաջնահերթություն է տրվել հետևյալ 4 ոլորտներին՝ առողջապահություն, կրթություն, պետական եկամուտների հավաքագրում և ոստիկանություն:

2015 թվականի փետրվարի 19-ին, Հայաստանի Կառավարությունը ընդունեց «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ եվ փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի եվ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումը: Ենթադրվում է, որ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը կարող է դառնա արդյունավետ հարթակ պետական և ոչ պետական հատվածներում կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի (այուհետ՝ Խորհուրդ) առաջին նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հուլիսի 28-ին: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը, ՀՀ կառավարության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) միջև ստորագրվելիք համագործակցության համաձայնագրի և դրան կից փաստաթղթերի նախագծերը, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին անընթեր փորձագիտական հանձնախումբի գործողությունների կարգը, ինչպես նաև փորձագետների ընտրության կարգը քննարկվեցին և հաստատվեցին Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստին:

2015-2018 թվականների գործողությունների ծրագրով ամրագրված է, որ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը պետք է կանոնավոր կերպով դիտարկի ՀՀ կառավարության Հակակոռուպցիոն ռազմավարության

իրականացման գործընթացը՝ նպաստելով կառույցիայի կանխարգելմանը, կոռուպցիայի դեմ պայքարի հանրային իրազեկվածության բարձրացմանը՝ գործընթացն ավելի հեշտ և թափանցիկ դարձնելով:

Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները

Հայաստանի՝ կոռուպցիայի դեմ պայքարում ստանձնած պարտավորությունները շարունակաբար ընդլայնվում են, մինչդեռ՝ պետական հակակոռուպցիան քաղաքականությունը կապվել է երկրի կայուն զարգացման առաջնահերթությունների հետ՝ դառնալով 2008 թվականի կառավարության գործողությունների հիմնական ուղղություններից մեկը:

2004 թվականի հունվարին Հայաստանը դարձավ Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) անդամ, այնուհետև՝ նույն թվականի հունիսին և դեկտեմբերին համապատասխանաբար վավերացրեց Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական կոնվենցիան և Կոռուպցիայի մասին քաղաքացիական կոնվենցիան: ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի առաջին և երկրորդ փուլերի գնահատման հաշվետվությունը ընդունվել է 2006 թվականի մարտին:

Հայաստանը ներգրավված է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում, որը կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով:

Եվրոպական հարևանության քաղաքականություն (ԵՀՔ) շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006 թ. վավերացրել են գործողությունների ծրագիր, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ: Հայաստանի

գործողությունների ծրագրում հասուկ գերակայությունների մեջ ներառվել են 8 հակակոռուպցիոն միջոցառումներ, այդ թվում՝ պատշաճ քննության ապահովումը և կոռուպցիոն հանցանքների հետապնդումը, Քրեական օրենսգրքի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, դատավորների և դատախազների էթիկայի կանոնների մշակումը, պաշտոնյաների կողմից գույքի և եկամտի սխալ հայտարարագրման դեպքում պատասխանատվության սահմանումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը և այլն: Այս գործողությունների ծրագրում նշված համարյա բոլոր միջոցառումները միաժամանակ ներառված են նաև ՄԱԿ-ի, Եվրոպայի Խորհրդի «Քրեական իրավունքի մասին» և «Քաղաքացիական իրավունքի մասին» կոնվենցիաներում, Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO, ԿԴՊՊԽ)-ի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունների առաջարկություններում:

2005 թվականին ՀՀ-ը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան (ՄԱԿԿԴԿ), որը վավերացվել է ՀՀ ԱԺ-ի կողմից, 2006 թվականին: Լինելով ՄԱԿԿԴԿ անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը ենթարկվել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի իրականացման մոնիթորինգին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերոնշյալ ցուցիչների վերլուծությունը ցույց են տալիս, որ Հայաստանում արդյունավետ կառավարման լավագույն փորձը դեռևս պայմանավորվում է լայնամասշտաբ մարտահրավերներով:

Կարևորագույն մարտահրավերներից է համարվում օրենքի գերակայության և հաշվետվողականության բացակայությունը՝ երկրում կոռուպցիոն ռիսկերի կայուն առկայությանը զուգընթաց, որը խոչնդոտում է պետության տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացմանը:

Կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերը և խնդիրները առանցքային դեր ունեն: Հանրային շահը հիմնականում օգտագործվում է անձնական շահի համար և պետությունը շրջապատված է էլիտայով և անձնական շահով, որը հանգեցնում է հանրության կողմից կառավարության և վերջինիս կողմից վարած քաղաքականության վարման նկատմամբ անվստահության: Սրա լավագույն օրինակը ներկայիս հակակոռուպցիոն ռազմավարությունն է, որը դեռևս դրական փոփոխությունների չի հանգեցրել դրական փոփոխությունների և հանրությունը չի վստահում դրա արդյունավետությանը և իրատեսությանը:

Մինչդեռ, օլիգարխները և կաշառակերները մնում են անձեռմխելի: Որպես արդյունք, քաղաքացիները և փոքր ձեռնարկատերերը համարում են կոռուպցիան որպես լուրջ խնդիր և դրա բացասական արդյունավետության հանրային իրազեկումը բարձրանում է: Սրա առնչությամբ, առանցքային մարտահրավերներից է երկրի հակակառուպցիան քաղաքականության, օրենսդրության և ինստիտուտների պատշաճ իրականացման ձախողումն է: Ավելին՝ կոռուպցիոն հանցագործությունները պետք է պատշաճորեն և արդյունավետորեն հետաքննվեն:

Այսպիսով՝ կոռուպցիայի դեմ առավել արդյունավետ պայքար ապահովելու համար Կառավարությունը պետք է՝

- ապահովի հակակոռուպցիոն ռազմավարությունների խստապահանջ իրականացում՝ առավել ուժեղ ղեկավարության leadership և անհրաժեշտ միջոցներով
- ակտիվորեն և արդյունավետորեն ներգրավի քաղաքացիական հասարակությանը քաղաքականության մեջ
- ամրապնդի կոռուպցիայի հետաքննությունը մասնավորապես՝ պաշտոնատար անձանց շրջանում
- ապահովի առավել թափանցիկ և ողջամիտ պետական գնումների համակարգ:

Քաղաքական համակարգում դեռ բացակայում են զսպման եւ հավասարակշռման մեխանիզմները: Համակարգում մրցակցության և քաղաքական հաշվետվողականության բացակայությունը հանգեցնում է նաև այլ բնագավառերում լուրջ դեֆիցիտների, օրինակ՝ օրենքի գերակայության հետևողական կիրարկում և քաղաքական և տնտեսական գործընթացներում քաղաքացիների մասնակցություն:

Չնայած օրենսդրությունում և մասնավորապես բիզնես կարգավորումներում փոփոխություններին և լրացումներին՝ փոքր ձեռնարկատիրությունը դեռևս բավականաչափ զարգացած չէ: Սա կապված է մրցակցության բացակայության, տարածքային անհամաչափությունների, ոչ պաշտոնական ոլորտի, ինչպես նաև կարգավորումների թույլ իրականացման հետ: Ավելին՝ անգործունակությունը և աղքատությունը դեռևս մնում են որպես լուրջ խնդիրներ:

Այս առումով՝ կարգավորման որակի ապահովման համար, Կառավարությունը պետք է՝

- ապահովի կարգավորումների ավելի լավ իրականացում՝ նպատակ ունենալով խթանել մասնավոր հատվածի զարգացմանը

- ողջամիտ քաղաքականությամբ աջակցել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը
- զարգացնել և դիվերսիֆիկացնել մրցակցային արտահանման ճյուղերը
- ամբողջացնել ֆինանսական շուկաները ավելի երկարաժամկետ զարգացման:

Մասնակցային քաղաքականության առումով իրավիճակն ավելի հուսադրող է: Քաղաքացիական մասնակցությունն քաղաքական որոշումների կայացման գործընթացում կարգավորող օրենքներն և ընթացակարգերը բավարար են ապահովելու հանրության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում: Այնուամենայնիվ, խորհրդատվական հաղորդակցության մշակույթը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում պետք է ընթանան զուգընթաց՝ թափանցիկության մշակույթի հետ մեկտեղ: Սա պահանջում է առավել արդյունավետ և ակտիվ մասնակցություն քաղաքացիական հասարայության կողմից և ավելի շատ թափանցիկություն և հաշվետվողականության կառավարության կողմից: Ի աջակցություն սրա՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները գիտելիքի և ռեսուրսների, հստակ բյուջեի տեղաբախշման և քաղաքականությունների մշակման գործընթացներում վերապատրաստման, նոր նախաձեռնությունների և օրենքների շուրջ հանրային քննարկումներ կորդինացնելու իկարիք ունեն, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը վերապատրաստման կարիք ունի՝ գործընթացում պրոֆեսիոնալ, կառուցողական գործընկեր լինելու համար:

Տեղեկատվության աղբյուրներ

Սույն հաշվետվությունում օգտագործած տվյալները հավաքագրվել են պետական քաղաքականությունների, օրենսդրությունների և ռազմավարությունների հաշվետվություններից: Միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները և ուսումնասիրությունները օգտագործվել են վերոնշյալ տեղեկությունն ամբողջացնելու համար: Հաշվետվությունը հիմնված է նաև կազմակերպության կողմից ամենօրյա գործունեության ընթացքում տարբեր ոլորտներին առնչվող և իրականացրած ծրագրերից հավաքագրած տեղեկատվության և բացահայտումների վրա: